

ԱՒԵՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԵԾԻ ՄԱՍԻՆ

Ա.

Աղէքսանդր Մեծի մայրը սիրահարուել է իրենց մօտ գերի բռնուած մի թագաւորի վրայ, որ նշանաւոր կախարգ է եղել: Սա միշտ վիշապի կերպարանք է ընդունել և այնպէս եկել թագուհու մօտ, որպէսզի ոչ ոք չկոսկածի նրանց սիրոյ մասին: Այս վիշապ կախարգից եղել է Աղէքսանդրը: Սակայն վերջիվերջոյ թագաւորը սկսել է կոսկածել, ուստի և կախարգը փախել է Հայաստան և այստեղ, Մասիսի ստորոտում, առանձին ապրել: Կարճ միջոցում նրա կախարգութեան համբաւը տարածուել է շատ տեղեր և երբ Աղէքսանդր Մեծը եկել է Հայաստան, լսել է այս կախարգի համբաւը և ցանկացել գուշակել տալ նրան, թէ իւր արշաւանքները ինչ ելք պիտի ունենան: Բայց նախ քան այդ, կամեցել է փորձել նրան և հարցրել է, թէ ո՞ւմ ձեռքից պիտի մեռնի նա:

— Ես իմ որդու սրից պիտի մեռնիմ, պատասխանում է կախարգը շատ հաստատուն կերպով:

Աղէքսանդրը նրա այսպէս հաստատուն կերպով խօսելու վրայ զայրացած՝ քաշում է սուրը և սպանում նրան: Սա գեռ չմեռած յայտնում է, որ իւր գուշակութիւնը արդէն կատարուեց, քանի որ Աղէքսանդրը իւր որդին էր:

A.

Աղէքսանդր Մեծը գլխի վրայ մի եղջիւր է ունեցել, Կամենալով գաղտնի պահել այս, նա իրեն գլուխը խուզող սափրիչներին անմիջապէս գլխատել է տուել: Սակայն մի սափրիչ երգումներ տալով, որ ոչ ոքի չի ասել այս գաղտնիքը, ազատոււմ է մահից: Բայց այս սափրիչը չի կարողանում գաղտնիքը պահել, նրա փորը սկսում է ցաւել և ուռչիլ: Նարահատուած գնում է մի դաշտ, կռանում մի ջրհորի վրայ և շննջում. Վսկանդարի գլխին եղջիւր կայ: Իսկոյն փորի ցաւը կտրում է և ուռուցքը իջնում: Սակայն շուտով ջրհորի միջից մի եղեգ է դուրս գալիս և բաւական բարձրանում: Մի հովիւ կտրում է այդ եղեգը, մի շուկ շինում և հէնց որ սկսում է ածել, շուկն պարզ և որոշ կրկնում է. Վսկանդարի գլխին մի եղջիւր կայ: Պատահում է, որ Աղէքսանդր Մեծը որսի գնալիս անցնում է այդ տեղից և լսում այդ սրնգի ասածը: Անմիջապէս կանչում է երգմնազանց սափրիչին և բարկանում է վրան, ասելով թէ ինչո՞ւ գաղտնիքը այնպէս տարածել է, որ մինչև անգամ հովիւները երգ են շինել:

Սափրիչը երգւում է նրան, որ միայն ջրհորին է ասել, սակայն Աղէքսանդրը չի հաւատում և հրամայում է նրան գլխատել: *)

*) Այս աւանդութիւնը կայ նաև Թուրքերի մէջ. տես „Село Татевъ“.